

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Ա Կ Ո Ւ Ն Ք

**ԳԻՏԱՍԵԹՈՂԱԿԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

ԹԻՎ 2 (12)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտխորհուրդը

Գլխավոր խմբագիր՝

պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝

*Գրիշա Ալեքսանի Ղարիբյան – տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*

Պետրոս Հովհաննեսի Հովհաննիսյան - պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր

Հարություն Ալեքսանի Մարգարյան – տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր

Յենրիկ Մուշեղի Աբրահամյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ռաֆիկ Աքանազի Նահապետյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սամվել Արշավիրի Առաքելյան – պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Հայկ Սկրտիչի Դերձյան – իրավագիտ. դոկտոր, պրոֆեսոր

Յենգել Գերասիմի Մանուչարյան – քաղաքագիտ. դոկտոր, պրոֆեսոր

Աննա Գրիգորի Ասատրյան - արվեստագիտութ. դոկտոր, պրոֆեսոր

Սամվել Պարզևի Մուրադյան – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սեդա Քերրբի Գասպարյան – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սեյրան Արտուշայի Չաքարյան – փիլիս. գիտութ. դոկտոր, պրոֆեսոր

Մելսիկ Պարզևի Սկրտունյան – հոգեբանութ. դոկտոր, պրոֆեսոր

Ակունք. Գիտամեթոդական և ուսումնամեթոդական հոդվածների ժողովածու / Խմբ. խորհուրդ՝ Գ.Ա. Ղարիբյան և ուրիշ.: Գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2015 թ. – 142 էջ:

© ԵՊՀ հրատարակչություն, 2015 թ.

© Հեղ. խումբ, 2015 թ.

ԳՐԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՄԻ ՔԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր. գրողի նամականի, ներաշխարհի բացահայտում, ուսուցման գործընթաց, ապրումներ, կենսագրական ակունքներ, քնարական հերոս, սիրային հազեցվածություն, եզրահանգումներ, գրական պլաններ:

Գրողի գրական ժառանգության անբաժան մասն են կազմում նրա նամակները, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու արվեստագետի ստեղծագործական աշխարհի առանձնահատկությունները, ներաշխարհը՝ միաժամանակ նաև պատկերացում տալով հեղինակի անհատականության, կյանքի, գործունեության, անգամ հույզերի և ապրումների մասին: Այդ տրամաբանությամբ Վահան Տերյանի նամակներն ընթերցողին գրավում են իրենց անկեղծությամբ, բովանդակային հարստությամբ, գաղափարական և գեղարվեստական ընդհանրացումներով:

Ուսուցման գործընթացում բանաստեղծի նամակների ուսումնասիրումը ենթադրում է համապատասխան նախապատրաստական աշխատանքի կազմակերպում: Ուսուցանողը պետք է նախապես ուսումնասիրի հեղինակի կենսագրությունը, կարդա թեմայի հետ առնչություն ունեցող նյութերը, գրականագիտական հոդվածները, նամակները և դրանցից բխող տրամադրությունների ու հոգեվիճակների արտացոլումները գտնի բանաստեղծությունների մեջ: Նամակներում տեղ գտած անձնական բնույթի առանձին խոստովանություններն անհայտության մշուշից փրկում են գրողի կենսագրությունից դուրս մնացած շատ փաստեր, իսկ այդ ուսումնասիրությունն օգնում է ստեղծագործությունները քննել այլ տեսանկյունից՝ հետաքրքրական դարձնելով կենսագրական և բանաստեղծական նյութի յուրացումը:

Դասընթացի ուսուցումն սկսելուց առաջ նպատակահարմար է ուսանողներին հանձնարարել ընթերցել բանաստեղծի նամակները, առանձնացնել այն բանաստեղծությունները, որոնք անկայտ կերպով նամակների տրամադրությունների արձագանքն են և Տերյանի համար բանաստեղծական ներշնչանք են դարձել: Այս ամենի կազմակերպված ընթացքը կնպաստի սովորողների շրջանում ինքնուրույն վերլուծական մտածողություն զարգացնելուն և եզրահանգումներ կատարելուն:

Նամակների ուսուցումն առավել արդյունավետ և հետաքրքիր անցկացնելու համար դասախոսը կարող է նամակների ընթերցման և նամակ-բանաստեղծություն գուգահեռ վերլուծության միջոցով ցույց տալ գրողի ներաշխարհի, նրա հուզապրումների անմիջական ազդեցությունը ստեղծագործություններում:

Տերյանի նամակներն ուսումնասիրելիս շատ ընդհանրություններ ենք նկատում հեղինակի անձնական զգացումների և քնարական հերոսի հոգեկան

ապրումների միջև: «Նրա «լիրիկական հերոսի» և բանաստեղծի անձի միջև չկա որևէ տարածություն: Նա խոսում է իր անունից, արտահայտում իր սեփական զգացմունքներն ու հույզերը»¹: Այս իմաստով հետաքրքիր է հենց իր՝ Տերյանի դիտարկումը նամակի մասին. «Քանն այն է, որ նամակ գրելը ես համարում եմ մի գրույց, իսկ ընկերական և մտերմական գրույցի ժամանակ խոսքերը չես ընտրում, չես աշխատում խոսել տրամաբանորեն ու «խելոք», այլ գրուցում ես անբռնագրասիկ, ազատ առանց վախենալու և քաշվելու: Ահա թե ինչու ես ասում եմ, որ նամակը պետք է միայն այն մարդը կարդա, ում գրված է նա...»²: Տերյանն այնքան ազատ է իր շարադրանքում, որ թեև իր խոսքը համարում է խառն ու շփոթ, բազմագույն, բայց, միևնույն է, ուղարկում է այդ նամակները:

Կանանց ուղղված նամակների շարքում առանձնակի ուշադրություն են գրավում Նվարդ Թումանյանին հասցեագրված նամակները: Թեև վերջինիս հետ նամակագրությունը կարճ է տևել, բայց այնուամենայնիվ այդ նամակներն իրենց բովանդակությամբ ամենահարուստն են թե՛ գեղագիտական ամենատարբեր խնդիրների վերաբերյալ մեկնաբանություններով, թե՛ այլ հարցերի քննարկումներով: Նվարդին ուղղված մի նամակում Տերյանը գրում է. «Իսկ պաշտոնական կամ կիսապաշտոնական նամակագրությունից գրեթե զզվում եմ: Դրա համար ես կուզեի նամակագրության ժամանակ ինձ միանգամայն ազատ զգալ և անպատասխանատու, ինչպես ինքս իմ առջև»³: Այս կերպ նա ընդհանրապես պարզում է նամակի բովանդակության վերաբերյալ իր նախընտրությունը:

Տերյանի նամակները միշտ չէ, որ ունեն բովանդակային միակերպություն և վերաբերում են որևէ կոնկրետ երևույթի կամ հարցի: Ավելի հաճախ նրանցում համատեղվում, իրար հաջորդում են տարբեր հարցերի վերաբերյալ դիտարկումներ: Ստացվում է այնպես, որ անձնական ապրումների, տրամադրությունների բացահայտումները հաճախ ընդմիջվում են ազգային-հասարակական հարցերի քննությամբ: Օրինակ՝ Նվարդին ուղղված մեկ այլ նամակում ցավով գրում է. «Վերջիվերջո ես սկսում եմ գալ այն եզրակացության, որ մեր հայրենիքի ցավը մեզ այնպես է մաշում, ջլատում, կեղեքում, որ մենք դառնում ենք անընդունակ ուրիշ բան հասկանալու կամ անելու: Դա մի հիվանդագին սեր է, դա մի անհաղթելի մոլություն է - դրա պրիզմայով է բացվում մեր առջև աշխարհը - այդ չափով ենք մոտենում մենք ամեն ինչի և գուցե դրա համար անգոր ենք դառնում ու մեռնում ենք վաղ»⁴: Իսկ, օրինակ, Ալ. Ծատուրյանին ուղղված նամակներից մեկում, խոսելով բանաստեղծի և քնարական հերոսի մասին, Տերյանն ինքնախոստովանության պես գրում է. «Մենք գիտենք տատասկոտ ու փշոտ հայ բանաստեղծի ճանապարհը: Եթե ուրիշ ազգերի մեջ բանաստեղծ լինելու համար հարկավոր է միայն աստվածային կայծ ունենալ, մեր իրականության մեջ բանաստեղծը պետք է նաև հերոս լինի»⁵: Այս ընդգծումը, անշուշտ, կարևոր է. չէ՞ որ բանաստեղծությունը գրողի հոգու և երազների արձագանքն է, իսկ նամակների ուշադիր քննությունը նպաստում է հեղինակի կերպարի ամբողջացմանը:

¹ *Կամսար Գրիգորյան*, Վահան Տերյան, Երևան, 1983, էջ 96:

² *Վահան Տերյան*, Երկերի ժողովածու, հատոր 4, Երևան, 1979, էջ 160:

³ *Վահան Տերյան*, Երկեր, Երևան, 1989, էջ 518:

⁴ Նույն տեղում, էջ 529:

⁵ *Վահան Տերյան*, Երկերի ժողովածու, հատոր 3, Երևան, 1963, էջ 222:

Նվարդ Թումանյանին ուղղված գրեթե յուրաքանչյուր նամակում Տերյանը խոսում է իր հոգեկան վիճակի, գործերի, թարգմանությունների, բանաստեղծական ժողովածուների մասին, նաև այն մասին, թե դրանք ստեղծագործական որ փուլում են գտնվում: Նվարդին ուղղված նամակներում պոետը խոսում է ոչ միայն իր գործերի, այլև «Մշակ»-ում լույս տեսնող հոդվածների մասին՝ անդրադառնալով ուրիշ գրողների ստեղծագործությունների: 1915 թվականի սեպտեմբերին Նվարդին հասցեագրված մի նամակում Տերյանը բնորոշում է արևելահայ արձակը. «Մեր պրոզան սարսափելի կերպով պրիմիտիվ է, երբեմն մարդ շժմած է մնում, թե ինչպես են այնքան միամիտ և պարզամիտ մեր գրողները: Բոլորը գրված են կիսագրագետ մարդկանց համար...»⁶:

Նվարդի նկատմամբ նուրբ զգացողություններն ու հուշերն ամեն անգամ նոր կյանք էին առնում, ու ծնվում էին նորանոր տողեր՝ բխած հեղինակի կարոտած սրտից. «Ես մի քանի տրիոլետ էի գրել Ձեզ համար, իմ սիրելի և լավ Նվարդ, բայց ուղղելու կարիք կա, ուստի չդրկեցի: Ուզում էի, որ «տրիոլետների մանյակ» լինի դա, բայց ամեն անգամ երբ նստում էի Ձեզ գրելու, միտս էին ընկնում այդ կիսատ մնացած տրիոլետներս և գրելու տրամադրությունս փախչում էր»⁷.

Սրտիս հուշերը բարի են դեռ,
Եվ քո անվամբ է, անուշ Նվարդ,
Որ մայիսին այս դառն ու անվարդ
Սրտիս հուշերը բարի են դեռ:
Թեև իջնում է հոգուս վրա ստվեր
Եվ չեմ սպասում գալիքից վարդ
Սրտիս հուշերը բարի են դեռ
Քո քնքուշ անվամբ, անուշ Նվարդ:

1920 թ. ապրիլին ծնվեց Տերյանի առաջնեկը, ով կրում էր պոետի մտերիմներից Նվարդի անունը: Հետագայում Նվարդ Թումանյանն իր հուշերում գրում է. «Նրա հոգին նուրբ էր ու քնքուշ, իր Գանձայի ծաղիկների նման՝ նրբին ու զգայուն: Միտքը՝ ջերմ ու հուր, իր երկրի սարերի նման՝ կրակ ու հրաբուխ ու եղ սարերի նման էլ «լայն ու բաց», բայց միշտ մի թախճոտ տխրությամբ համակված, ինչպես իր հայրենի սարերը մշուշապատ»⁸:

Վահան Տերյանի կյանքում թերևս ճակատագրական է եղել Անթառամ Միս-կարյանի հետ հանդիպումը: Առաջին հայացքից վերջինս լավ տպավորություն է թողել բանաստեղծի վրա, տպավորություն, որը հետագայում վերաճել է սիրո: Իր սիրելի Անետային ուղղված նամակներից մեկում Տերյանը գրում է. «...Առաջին տպավորությունն ինձ համար ունի եթե ոչ վճռական, ապա, համենայն դեպս, հսկայական նշանակություն: Չեմ կարող ձեզ հետ համաձայնել, որ մեծ մասամբ պատահական հանդիպումներն ու ծանոթություններն են «հաճելի լինում»⁹: Անթառամի հետ հաճելի հանդիպումն ու ծանոթությունը լավ բարեկամության հիմք են դառնում՝ սկզբնավորելով նրանց երկարատև, հետզհետե մտերմացող նամակագրությունը (1908 թ. հոկտեմբերից 1916 թ. հուլիս): «Տեր-

⁶ Նույն տեղում, էջ 557:

⁷ *Վահան Տերյան*, Երկեր, Երևան, 1989, էջ 537:

⁸ *Վահան Տերյանը* ժամանակակիցների հուշերում, Երևան, 1964, էջ 67:

⁹ *Վահան Տերյան*, Նամակներ, Երևան, 1972, էջ 61:

յանի առաջին նամակը Խարկով Անթառամ Միսկարյանին թվագրված է՝ 1908-ի հոկտեմբերի 19»¹⁰:

Հաճախ Անթառամին ուղղված նամակներից բառացի տողեր կարելի է տեսնել գրողի բանաստեղծություններում: Մա նշանակում է, որ Անթառամը Տերյանի համար սրտակից ընկեր է եղել, ում հետ զրուցելիս պոետն անկեղծացել է իր տրտմության, թախծի, թաքուն երազների, անձնական ապրումների մասին: «Ինչ-որ անտարբեր վիճակ է: Առանձնապես ոչ մի բան չեմ ուզում: Կամագրկություն է: Էհ, Անտյա, ճշմարիտ, ինքս էլ չգիտեմ, այս ինչ է կատարվում ինձ հետ: Միայն մի բան եմ ուզում՝ պառկել, պառկել անվերջ, անվերջ պառկել ու նայել առաստաղին: Աննպատակ պառկել: Աննպատակ պառկել: Մոռանալ ամեն ինչ, ամեն ինչ մոռանալ և ոչինչ ու ոչ ոքի մասին չմտածել: Իմ մասին էլ չմտածել՝ հանգստանա՛լ»¹¹.

Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ,
Ամենին մոռանալ.
Չըսիրել, չխորհել, չափսոսալ և
Հեռանա՛լ...

1909 թ. Անթառամին հասցեագրված մեկ այլ նամակում կարդում ենք . «Մենության անապատից վերադառնալ մարդկանց մեջ նորոգված ու լուսավոր, սերը սըրտում և կյանքի, աշխատանքի ծարավով: Ես այս ամենը գրում եմ իմ մասին, բայց ինձ թվում է, որ դա մասամբ եթե ոչ ամբողջովին, վերաբերում է և ձեզ, սիրելի Անտյա»¹²: Նրբազգաց քնարերգուի այս հոգեվիճակն ու տրամադրությունը նույնատիպ դրսևորվել են 1911 թ. գրված «Մենության խավար գնդանից կրկին...» բանաստեղծության մեջ.

Մենության խավար գնդանից կրկին
Ես վերադարձա հզոր ու հպարտ,
Եվ ինձ ողջունեց աղմուկը զվարթ,
Ու նոր խնդությամբ այրեց իմ հոգին...

Այն, որ Անթառամի հետ նամակագրությունն առանձնահատուկ էր գրողի համար, երևում է նաև նրա՝ Անթառամին ուղղված մի նամակից ևս. «Ձեր նամակները ես միշտ կարդում եմ հսկայական բավականությամբ և դրանք զատում եմ իմ ստացած բազմաթիվ նամակներից: Դուք գրում եք միայնության, տրտմության, շրջապատի չհասկացողության մասին: Հավատացե՛ք, Անտյա, ես հասկանում եմ ձեզ, շատ լավ եմ հասկանում և ամբողջ սրտով կուզենայի ձեր բարեկամը լինել»¹³:

Մուսաննա Պախալովայի հետ ամուսնանալուց հետո Տերյանը շարունակեց Անթառամի հետ նամակագրությունը: Այդ հանգամանքը թերևս փաստում է Անթառամին սիրահարված լինելու իրողության մասին:

Ճակատագիրը բանաստեղծի տաղանդի հարցում շոայլ էր գտնվել, սակայն անձնական կյանքում նա դժբախտ էր: Մուսաննայի և Տերյանի համատեղ կյանքը չստացվեց: Թեև Անթառամն էլ էր ամուսնացել, բայց Տերյանը շարունակում էր

¹⁰ *Նինա Հարությունյան*, Կանայք Տերյանի կյանքում, Երևան, 2005, էջ 12:

¹¹ *Վահան Տերյան*, Նամակներ, Երևան, 1972, էջ 95:

¹² Նույն տեղում, էջ 111:

¹³ Նույն տեղում, էջ 93:

վերջինիս հետ նամակագրությունը. նրանք դեռ հույսեր ունեին: 1909 թ. Անթառամին հասցեագրված մի նամակում կարդում ենք. «Ամենից առաջ շնորհավորում եմ ձեր նշանդրեքը և հղում եմ ձեզ լավագույն ցանկություններս այդ առթիվ, թեև չեմ հավատում, որ իրոք նշանվել եք: Բայց ստում են, խելացի մարդիկ ոչ մի բանի վրա չպիտի զարմանան այս պատ լուսնի ներքո, որովհետև ոչ մի անհնարին բան չկա այս աշխարհում»¹⁴:

Անձնական կյանքի իր երջանկությունը բանաստեղծը փորձում էր գտնել արվեստում.

...Եվ կյանքս բոլոր մի երկարատև
Նինջ թվաց հոգուս, մի քաղցր երագ,
Նրբին մի համբույր հեռու օրերում,
Մանկական մի երգ, որ չունի անուն...

Սուսանայի հետ բաժանումից հետո Տերյանն ամուսնացավ Անահիտ Շահիջանյանի հետ, ով բանաստեղծի կողքին եղավ նրա ծանր հիվանդության ժամանակ և ժառանգ պարգևեց: Մակայն Տերյանը երբեք չմոռացավ Անթառամին: Մահվան մահճում նրա շուրթերը շարունակ Անթառամի անունն էին տալիս, թեպետ կողքին էր Անահիտը:

Գրողի նամակների ուշադիր քննությունը բացահայտում է պոետի խառնվածքը, աշխարհայացքը, հուզաշխարհը և վեր հանում նրա հոգու տազնապները: Նամակների ուսումնասիրությունն ավարտելուց հետո դասախոսը կարող է եզրահանգումներ անել՝ կապված բանաստեղծի քնարական հերոսի և հեղինակի անձնական ապրումների հետ:

Վահան Տերյանի՝ խորապես սիրային հագեցվածություն ունեցող բանաստեղծությունները կենսական ակունքներ ունեն: Մեկը մյուսի հետևից ստեղծված նրբանուրբ երգերը դարման դարձան սիրելիին չհասած բանաստեղծի կսկծացող սրտին՝ ստեղծելով երագային պատրանք:

Анна торосян - Статья посвящения изучению эпистолярного жанра Вагана Теряна. - Среди этих писем выделяются письма женщинам, которые в автора имели судьбоносное значение. Посредством параллельного анализа письма-стихотворения мы попытались показать непосредственные проявления личных переживаний автора.

Anna Torasyan - This article relates to the teaching of Vahan Teryan's epistolary. - In the range of the epistolary especially those letters are considered that were written to the women who had crucial role in the poet's life. Through parallel analysis of letter-poem, we have tried to show the direct manifestation of the personal experiences of the author.

¹⁴ Նույն տեղում, էջ 105 -106:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Պ Ա Տ Մ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ВАЛЕРИ ТУНЯН

- 100-летие геноцида армян: истоки, мифы и последствия..... 3
- ՔՐԻՍՏԻՆԵ ՅԱԽՇՅԱՆ*
- Մերձավոր եվ միջին արեվելքի երկրների հայկական համայնքների պատմության ուսումնասիրությունը 1960-ական թվականներին..... 21
- ՄԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
- Գիտակրթական կյանքը Արցախում 1639-1700թթ (համառոտ ակնարկ) 32

Գ Ր Ա Կ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

- Վահան Տերյանի մի քանի նամակների ուսումնասիրման անհրաժեշտությունը..... 41
- ԷՄՄԱ ՆԻԿՈՅԱՆ*
- Մուրեն Այվազյանի պատմագեղարվեստական արձակը 46
- ԱԼԻՍԱ ՀԱՍԱՆՅԱՆ*
- Թվի խորհուրդը Համո Մահյանի քնարերգության մեջ..... 50
- ԱՄԻՔԵՆ ԱՏԱՆԵՍՅԱՆ*
- Методические основы изучения творчества И.А.Бунина в вузе 58

Լ Ե Ջ Վ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

- Անգլերենի բժշկական բառապաշարի ուսուցման տրամախոսական հայեցակերպը 64
- ՄԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*
- Comment rédiger une composition? 71
- ՏՎԵՏԱ ՕԽԱՆԻԱՆ*
- Acte d'expression d'excuse dans la langue française..... 75
- ԱԲԴԱ ՍԱՀՄԱՅԱՆ*
- Միակազմ նախադասություններին ուսուցումը 78
- ՅՈՒԼՅԱ ՀՈԺՋՅԱՆ*
- Опыт анализа художественно-документальной прозы на уроках русского языка для гуманитарных факультетов (на материале повести с.алексиевич “у войны не женское лицо”)..... 89
- ԱԻԴԱ ՄԱՐԴԱՆԻԱՆ*
- La maîtrise des règles de l'accord du français pour les apprenants arméniens..... 96